

ԴԱՍ 4. ԳԼՈՒԽ 2 — ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Հայտնություն 2:8-11 Նամակ Զմյուռնիային

Նոր կտակարանյան ժամանակաշրջան New Testament Period

- Եփեսոսը՝ մեծ քաղաքական կենտրոն էր
- Զմյուռնիան առևտրի մեծ կետն էր

8) Եվ **Զմյուռնիայում** գտնվող եկեղեցու հրեշտակին գրի՛ր. «Այսպես է ասում **Առաջինը և Վերջինը**, որ մեռած էր և ապրում է»:

1. Զմյուռնիա - «Տառապանք» կամ «Մահ»

«Զմյուռնիա» անունը ծագում է հունարեն «Զմուռնա» բառից, հրեական արմատից, որը թարգմանվում է «զմուռն»։ Այսպիսով... մահ...

օժանելիք (Մատ. 2:11 իրանց գանձերը բացին՝ ընծա տուին նորան՝ **ոսկի** և **կնդրուկ** և **զմուռն**):

2. Քրիստոսի տիտղոսը – Title of Christ

Առաջինը և Վերջինը, որ մեռած էր և ապրում է»:

- Հայտնություն 1:17 — «Առաջինը և Վերջինը, Ալֆան և Օմեգան»
- Եսայի 41:4 — Ո՞վ գործեց և արեց այս. ազգերը ի սկզբանե կանչողս՝ ես Եհովա որ առաջինն եմ, և վերջինների հետ էլ ես եմ:
- Եսայի 44:6 — Այսպես է ասում Տէրը՝ Իսրայելի Թագավորը, և նորա Փրկիչը՝ Զօրաց Տէրը. Ես եմ առաջինը, և ես եմ վերջինը. և ինձանից ջոկ Աստուած չկա:
- Եսայի 48:12 — Լսիր ինձ, ով Յակոբ և իմ կանչած Իսրայել, ես նոյնն եմ, ևս առաջինն եմ, հենց վերջինն էլ ես եմ:
- Հայտնություն 1:17-18 — Եւ երբոր տեսա նորան, մեռածի պէս ընկա նորա ոտների առաջին. և նա իր աջ ձեռքն ինձ վերա դրաւ և ասեց ինձ. Մի վախեցիր, ես եմ Առաջինը և Վերջինը,
- Հայտնություն 2:8 — Եւ Զմյուռնիայի եկեղեցու հրեշտակին գրիր. Մա է ասում Առաջինը և Վերջինը որ **մեռած էր, և կենդանացավ**:
- Հայտնություն 22:13 — Ես եմ Ալֆան և Օմեգան. սկիզբը և վերջը, առաջինը և վերջինը:

3. Գովասանք – Commendation

9) Գիտեմ քո գործերը, **նեղությունը** և **աղքատությունը** (բայց դու հարուստ ես) ու նրանց հայհոյախոսությունը, ովքեր ասում են, թե **հրեա են**, բայց՝ չեն, այլ՝ սատանայի մի ժողով:

աղքատությունը

2 Կոր. 6:10 - ¹⁰ Ինչպէս տրտմածներ, բայց միշտ ուրախներ. ինչպէս աղքատներ, բայց շատերին հարստացնողներ. ինչպէս թէ ոչինչ չունեցողներ, բայց ամեն բան ունեցողներ:

Նեղություններ

- 1) համատեղ ճնշում, սեղմում
 - 2) Խորհրդապատկերում է ճնշվածություն, դժվարություններ, նեղություններ, տանջանքներ:
- Ոչ թե հատկապէս «**Մեծ նեղությունները**». մենք բոլորս էլ ունենալու ենք նեղություններ, դժվարություններ, հալածանքներ (Հովհ. 16:33, Բ Տիմ. 3:12 և այլն):

Յով. 16:33 - ³³ Այս բաները խօսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղութիւն ունենաք. աշխարհքում նեղութիւն կունենաք. բայց քաջացեք, ես հաղթել եմ աշխարհքին:

2 Տիմ. 3:12 - ¹² Եւ ամենը որ կամենում են աստուածաշտուրթեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսումը, հալածանք պիտի կրեն.

Յրեաները, որ «հրեա չէին»

Եփեսոս — ովքեր ասում են, թե իրենց **առաքյալ են**, բայց չեն.

Զմյուռնիային — ովքեր ասում են, թե **հրեա են**, բայց՝ չեն.

Ոչ-հրեաների հայհոյախոսությունը. Եկեղեցին «փոխարինու՞մ» է Իսրայելին: Հարմարեցնելով Իսրայելի խոստումներն իրե՞նց:

- Հայհոյախոսություն. «Սատանայի ժողով (սինագոգ)»: Հովհաննեսը գիտեր հրեաների հայհոյախոսության մասին (Հովհ. 8:44)

Չով. 8:44 - 44 Դուք ձեր սատանա հորից էք, եւ կամենում էք ձեր հոր ցանկութիւններն անել. նա սկզբից մարդասպան էր, եւ ճշմարտության մէջ չձեռնարկեց, որովհետեւ ճշմարտություն չկա նորանում. երբոր սուտն է խօսում, ինքն իրենից է խօսում, որովհետեւ ստախօս է եւ ստության հայրը:

• **Օրինապաշտություն. Գաղատացիների թթխմորը**

- Պահանջում էին հեթանոսների թլպատությունը. Գործք. 15:1,10
- Պողոսը հանդիմանեց Պետրոսին. Գաղ. 2:11, 3:1-3
- Պետրոսը համաձայնվում է. Բ Պետ. 3:15-16

2 Պետ. 3:15-16 - 15 Եւ մեր Տիրոջ երկայնատությունը փրկություն համարեցէք. Ինչպէս մեր սիրելի եղբայր Պողոսն էլ Աստուածանից իրեն տրուած իմաստության պէս գրեց ձեզ: ¹⁶ Ինչպէս ամեն թղթերու՜մս էլ խօսում է այս բաների համար. Որոնցում մի քանի դժուարիմաց բաներ կան. Որ անուսու՜մսերը եւ անհաստատները նորանց ծռում են, ինչպէս միւս գրքերն էլ՝ իրանց անձերի կորստեան համար:

- Առաջին հալածանքները եկան հրեաների, և ոչ թե հռոմեացիների կողմից:

- **Անտիոքում. Գործք. 13:50**

Գործ. 13:50 - 50 Բայց Հրեաները գրգռեցին բարեպաշտ եւ պատուաւոր կանանցը եւ քաղաքի գլխաւորներին, եւ հալածանք վերկացնելով Պողոսի եւ Բառնաբասի վերա՝ նորանց դուրս արին իրանց սահմաններիցը:

- **Իկոնիայում. Գործք. 14:2,5**

Գործ. 14:2,4 - 2 Բայց չ'հավատացող Հրեաները հեթանոսների սիրտերը գրգռեցին եւ չարացրին եղբայրների դէմ. 4 Եւ տարածայնութիւն եղաւ քաղաքի բազմութեան մէջ. Եւ ոմանք Յրեաների կողմն էին, եւ ոմանք առաքելների կողմը:

- Լյուստրիայում. **Գործք. 14:19**

- Թեսաղոնիկեյում. **Գործք. 17:5**

Վաղ եկեղեցում ցանված «որոմներ»

- **Օրինապաշտություն.** Քրիստոսի կատարած գործի կատարելության հերքում
- **Գնոստիցիզմ.** Քրիստոսի մարդեղության հերքում
- **Կայսրի երկրպագություն.** Քրիստոսի Տէր լինելու փաստի հերքում.

4. Անհանգստություն – Concern

Ոչ մի

Այս նամակում ոչ մի «քննադատություն» չկա: Տերը ոչ մի բողոք չունի: Նրանք գոհացրել էին Նրա սիրտը (Բ Կորն. 8:9):

2 Կոր. 8:9 - 9 Որովհետեւ գիտէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, որ ձեզ համար աղքատացաւ նա՝ որ հարուստ էր, որ դուք նորա աղքատութիւնովը հարստանաք:

5. Քաջալերանք – Exhortation

10) **Մի՛ վախեցիր** այն ամենից, ինչ պիտի կրես. ահա Բանսարկուն ձեզանից մի քանիսին բանտ է նետելու, որպէսզի փորձվէք, և **տաս օր** նեղություն էք կրելու: Մինչև մահ հավատարի՛մ եղիր, և քեզ կտամ կենաց պսակը:

Յռ. 8:38-39 - 38 Որովհետեւ հաստատ գիտեմ, որ ոչ մահ, ոչ կեանք, ոչ հրեշտակներ, ոչ իշխանութիւններ, ոչ զօրութիւններ, ոչ ներկայ բաներ,

ոչ գալու բաներ, ³⁹ Եւ ոչ բարձրութիւն, ոչ խորութիւն, եւ ոչ մէկ ուրիշ ստեղծուած բան կարող է մեզ բաժանել Աստուծո սերից՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսումն է:

«10 օր»

Դան. 1:11-15 - ¹¹ Եւ Դանիէլն ասեց Մելսարին, որին ներքնապետը դրել էր Դանիէլի, Անանիայի, Միսայէլի եւ Ազարիայի վրա, ¹² Աղաչում եմ՝ փորձիր ծառաներիդ **մի տասն օր**, եւ մեզ ուտելու համար ընդէղէն եւ խմելու համար ջուր տան. ...¹⁴ Եւ նա լսեց նորանց այս բանի համար, **եւ նորանց փորձեց տասն օր**: ¹⁵ Եւ **տասն օրից** հետո նորանց դէմքը ավելի լավ եւ մարմնով գէր էին քան թէ այն ամեն տղերքը, որոնք ուտում էին թագաւորի կերակրիցը:

54-68թթ. Ներոն (Պողոսը գլխատվեց, Պետրոսին խաչեցին գլխիվայր)

95-96թթ. Դոմիթիանոս (Հովհաննէսն արքայրվեց)

104-117թթ. Տրայան (Իգնատիոսը այրվեց սյան վրա)

161-180թթ. Մարկուս Ավրելիոս (Պոլիկարպոսը նահատակվեց)

200-211թթ. Եպտիմոս Սևերոս (Իրենիոսը սպանվեց)

235-237թթ. Մաքսիմոս (Ուրսուլան և Հիպոլիտոսը սպանվեցին)

249-251թթ. Դեսիոս

257-260թթ. Վալիրան

303-313թթ. Դիոկլետիանոս (Բոլորից չարը)

10-ը միասին՝ 250 տարի:

Ի՞նչու են քրիստոնյաները ընկնում փորձությունների մեջ

1. Աստծուն փառաբանելու համար — Դան 3:16-18, 24-25
2. Խրատ հայտնի մեղքի համար — Եբր 12:5-11; Յակոբոս 4:17; Հռոմ. 14:23; 1 Հովհաննէս 1.9)
3. Որպէսզի կանխենք մեղքից— 1 Պետ. 4:1-2
4. Մեզ պահում է հպարտությունից — 2 Կորնթ 12:7-10
5. Մեր հավատքն է նորոգում — 1 Պետ. 1:6

6. Մեր աճի համար — Հռոմ. 5: 3-5
7. Մեր հնազանդության համար — Գործք 9: 15-16; Ֆիլ 4: 11-13
8. մեր Փորձությունների մեջ վերազինվում ենք ուրիշներին մխիթարելու համար — 2 Կորնթացի 1: 3-4
9. Ապացուցելու Քրիստոսի իրականությունը մեր կյանքում — 2 Կորնթ. 4: 7-11

Պսակի խոստումը

«Պսակ». վարձք գործերի համար (ոչ թե փրկություն)

- Կյանքի պսակը (Հակ. 1:12, Հայտն. 2:10) նրանց համար, ովքեր տառապեցին Նրա համար:
- Արդարության պսակը (Բ Տիմ. 4:8) նրանց համար, ովքեր սիրեցին Նրա հայտնվելը:
- Փառքի պսակ (Ա Պետ. 5:4) նրանց համար, ովքեր կերակրում են Նրա հոտը:
- Անապականելի պսակը (Ա Կորն. 9:25) նրանց համար, ովքեր հաստատուն առաջ են գնում:
- Ուրախության պսակը (Ա Թեսաղ. 2:19) նրանց համար, ովքեր հոգիներ են շահում

6. Խոստում հաղթողներին – Promise to the Overcomer

11) Նա, ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ինչ է ասում եկեղեցիներին.
նա, ով հաղթանակի, երկրորդ մահից չի վսասվի:

Նրանք ովքեր մահանում են առանց Քրիստոսի, նորից պետք է մահանան

«Երկրորդ մահ». Հայտն. 20:6, Հուդա 12. «երկու անգամ մեռած»:

Չայ. 20:6 - 6 Երանելի եւ սուրբ է, որ բաժին ունի առաջին հարութեան մեջ. սորանց վերա իշխանութիւն չ'ունի երկրորդ մահը. այլ Աստուծո եւ Քրիստոսի քահանաներ կ'լինին. եւ նորա հետ կ'թագաւորեն հազար տարի: x7

Մեկ անգամ ծնված, երկու անգամ մեռած: Երկու անգամ ծնված, մեկ անգամ մահացած:

7. Ավարտ – Close

Նա, ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ինչ է ասում եկեղեցիներին:

Խրատական մակարդակ (բոլոր եկեղեցիներին)

Admonitory Level (to all churches)

- ✓ Եփեսոս - Նվիրում, ոչ թե միայն վարդապետություն
- ✓ Զմյուռնիա - Տոկալ (դիմանալ) նեղություններին

Անձնական կիրառություն (Յոմուռնիա)

Personal Application (Homiletics)

- ✓ Եփեսոս - Անտեսված առաջնայնություններ
- ✓ Զմյուռնիա - Սատանայական ընդդիմություն

Խոստում հաղթողներին

Promise to the Overcomer

- ✓ Եփեսոս - Ուտել Կենաց ծառից
- ✓ Զմյուռնիա - Չվնասվել երկրորդ մահից

Մարգարեական պատկերը

Prophetic Profile

- ✓ Եփեսոսը ներկայացնում է Առաքելական Եկեղեցին:
- ✓ Զմյուռնիան ներկայացնում է հալածվող եկեղեցին:

Յոմուռնիա

Կարդա 2-րդ և 3-րդ գլուխները: Ուրվագծիր Պերգամոսին ուղղված նամակը: Ո՞վ էր Բաղասամը: Ո՞վ էր Բաղակը: Կարդա Թվոց 22-25:

- Զմյուռնիան ներկայացնում է հալածվող եկեղեցին:
- Մի՛ շփոթեք հալածանքը (Նեղություն) «Մեծ նեղությունների» հետ...

Զիրենիաց լեռան վրայի քարոզը

Մատթեոս 24, Մարկոս 13, Ղուկաս 21

Մատթեոս 24:1-8

Մատ. 24:1-8 - 1 Եւ Յիսուսը դուրս եկած գնում էր տաճարից, եւ աշակերտները մօտ եկան՝ որ ցոյց տան նորան տաճարի շինուածքը: 2 Յիսուսն էլ պատասխանեց եւ ասեց նորանց. Չէ՞ք տեսնում այդ ամենը. ճշմարիտ ասում եմ ձեզ. այդտեղ քար քարի վերայ չի թողուիլ որ չքանդուի: 3 Եւ երբոր նա **Զիթենեաց սարի** վերա նստած էր, աշակերտներն առանձին նորա մօտ եկան եւ ասեցին. Սաա մեզ, այդ է՞րբ կլինի. եւ ի՞նչ կլինի քո գալստեան եւ աշխարհի վերջի նշանը: 4 Յիսուսն էլ պատասխանեց եւ ասեց նորանց. Չգոյ՛ջ եղէք, որ մէկը ձեզ **չխարի**: 5 Որովհետեւ շատերը կգան իմ անունովը եւ կասեն՝ Ես եմ Քրիստոսը. Եւ շատերին կմոլորեցնեն: 6 **Պատերազմներ** եւ պատերազմների համբաւներ կլսէք, զգոյ՛ջ եղէք, որ չշփոթուիք. որովհետեւ ամենը պետք է լինի. Բայց դեռ վերջը չէ: 7 Որովհետեւ **ազգ ազգի** վերա վեր կկենա, եւ **թագաւորութիւն թագաւորութեան** վերա. եւ **սովեր** կլինին. եւ **մահտարժամներ**՝ եւ տեղ տեղ **երկրաշարժութիւններ** կլինին: 8 Բայց այս ամենը ցաւերի սկիզբն է:

Մի խումբ նշաններ

	Մատթեոս	Ղուկաս	Չայտնություն
Սուտ քրիստոսներ	24:4-5	21:4	6:1-2
Պատերազմներ	24:6	21:9,10	6:3-4
Սովեր	24:7ա	21:11	6:5-6
Մահեր	24:7բ-8	21:12	6:7-8
Նահատակություններ	24:9	21:24	6:9-11
Չամաշխարհային քաոս	24:10-13	21:25	6:12-17

Տարբեր շեշտադրումներ – Different Emphasis?

- «Այն ժամանակ նրանք պիտի...» Մաթ. 24:8,9
- «Բայց այս բոլորից **առաջ**...» Ղուկ. 21:12
- «Բայց այս բոլորը՝ ցավերի սկիզբն է»

Մատ. 24:9-15 - ⁹ Այն ժամանակ ձեզ նեղութեան կմատնեն. եւ ձեզ կսպանեն, եւ իմ անունի համար ամեն ազգերից ատուած կլինիք: ¹⁰ Եւ այն ժամանակ շատերը կգայթակղին, եւ իրար կմատնեն եւ իրար կատեն: ¹¹ Եւ շատ սուտ մարգարէներ դուրս կգան՝ եւ շատերին կմոլորեցնեն: ¹² Եւ անօրէնութեան շատանալու պատճառովը՝ շատերի սերը կսառչի: ¹³ Բայց ով որ մինչեւ վերջը համբերէ՝ նա կփրկուի: ¹⁴ Եւ արքայութեան այս ավետարանը բոլոր տիեզերքում կքարոզուի ամեն հեթանոսներին վկայութիւն լինելու համար, եւ այն ժամանակ կգա վերջը:

¹⁵ Արդ՝ երբոր տեսնէք ավերածի պոռթկումը, Դանիէլ մարգարէի ձեռով ասուածը, սրբութեան տեղումը կանգնած. կարդացողը մտածէ.

Մատ. 24:16-20 - ¹⁶ Այն ժամանակ նորանք որ Հրէաստանումն են՝ թող փախչեն սարերը: ¹⁷ Ով որ կտուրի վերայ լինի՝ թող վար չգայ մի բան վեր առնելու իր տանիցը: ¹⁸ Եւ ով որ յանդումն է՝ թող յետ չդառնայ իր հանդերձները վեր առնելու: ¹⁹ Բայց վայ այն օրը յիշներին եւ ծիծ տուողներին: ²⁰ Եւ աղօթք արէք, որ ձեր փախչելը ձմեռը չլինի, **ոչ էլ շաբաթ օրը:**

Մատ. 24:21-31 - ²¹ Որովհետեւ այն ժամանակը մեծ նեղութիւն կլինի, որ նմանը աշխարհիքի սկզբիցը մինչեւ հիմա չեղաւ, եւ ոչ էլ երբէք կլինի: ²² Եւ եթէ այն օրերը չկարճացնուէին, ոչ մի մարմին չէր փրկուիլ. բայց ընտրուածների համար այն օրերը կկարճացնուին: ²³ Այն ժամանակ եթէ մէկն ասէ ձեզ՝ Ահա այստեղ է Քրիստոսը, կամ այնտեղ. չհավատաք: ²⁴ Որովհետեւ սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ վեր կկենան, եւ մեծ նշաններ եւ հրաշքներ կտան մինչեւ որ եթէ կարելի լինէր, ընտրուածներին էլ կմոլորեցնէին: ²⁵ Ահա առաջուց ասեցի ձեզ: ²⁶ Արդ եթէ ասեն ձեզ. Ահա անապատումն է, դուրս չգնաք. Ահա ներսի սենեակումն է. չհաւատաք: ²⁷ Որովհետեւ ինչպէս կայծակը դուրս է գալիս արեւելքից եւ երեւում մինչեւ արեւմուտք. այնպէս էլ կլինի մարդի Որդու գալուստը: ²⁸ Որովհետեւ որտեղ մեռած մարմինը լինի, այնտեղ կհաւաքուին արծիւները:

²⁹ Եւ շուտով այն նեղութեան օրերից յետո՝ արեգակը կխաւարի, եւ լուսինն իր լոյսը չի տա. եւ աստղերը երկնքից վայր կընկնեն, եւ երկնքի զօրութիւնները կշարժուին: ³⁰ Եւ այն ժամանակ կերելի մարդի Որդու նշանը երկնքումը, եւ այն ժամանակ կոծ կանեն երկրի բոլոր ազգերը. եւ կտեսնեն մարդի Որդին գալիս երկնքի ամպերի վրա զօրութիւնով եւ շատ փառքով: ³¹ Եւ նա կուղարկէ իր հրեշտակները մեծաձայն փողով, եւ նորանք կժողովեն նորա ընտրուածներին չորս հողմից՝ երկնքի ծայրերից մինչեւ նորա միւս ծայրերը:

Ղուկ. 21:1-10 - 1 Եւ մտիկ տուաւ, տեսաւ հարուստներին, որ իրանց տուրքը գանձանակն էին գցում... 5 Եւ երբոր ոմանք ասում էին տաճարի համար թէ Գեղեցիկ քարերով եւ նուէրներով զարդարուած է, ասեց. 6 Այդ բոլորն որ տեսնում էք, օրեր կ'գան, որ այդտեղ քար քարի վերայ չի թողուիլ որ չ'քանդուի: 7 Եւ հարցրին նորան եւ ասեցին. Վարդապետ, ե՞րբ կ'լինին սորանք եւ ի՞նչ է նշանը՝ երբոր սորանք լինեն: 8 Նա էլ ասեց. Զգոյշ եղեք՝ մի **խաբուիք**. որովհետեւ շատերը կ'գան իմ անունովը եւ կ'ասեն, թէ Ես եմ. եւ ժամանակը մօտեցաւ. արդ նորանց ետեւից մի գնաք: 9 Բայց երբոր **պատերազմներ** եւ խռովութիւններ կ'լսեք, մի զարհուրիք. որովհետեւ պէտք է որ առաջ նա լինի, բայց դեռ շուտով վերջը չէ: 10 Այն ժամանակ նորանց ասեց. **Ազգ ազգի** վրա կ'կենայ եւ թագաւորութիւն թագաւորութեան վրա: 11 Եւ մեծամեծ **գետնաշարժներ** եւ տեղ տեղ **սովեր** եւ **մահտարածամներ** կ'լինին. եւ երկնքիցն ահաւոր բաներ եւ մեծամեծ նշաններ կ'լինին:

12 **Բայց այս բոլոր բաներիցն առաջ** իրանց ձեռները ձեզ վերա կ'ձգեն եւ կ'հալածեն. Ժողովարանների եւ բանտերի մէջ կ'մատնեն, եւ կ'տանեն թագաւորների եւ կուսակալների առաջ՝ իմ անունի համար: 13 Եւ սա կ'լինի ձեզ վկայութեան համար: 14 Արդ ձեր սրտի մէջ դրեք, որ առաջուց հոգս չ'անեք պատասխանելու համար: 15 Որովհետեւ ես բերան եւ իմաստութիւն կ'տամ ձեզ. որին չեն կարողանա հակառակ խօսել եւ ոչ ընդդիմանալ ձեր բոլոր հակառակորդները: 16 Եւ կ'մատնվեք ծնողներից եւ եղբայրներից եւ ազգականներից եւ բարեկամներից էլ, եւ ձեզանից կ'սպանեն: 17 Եւ բոլորին ատելի կ'լինիք իմ անունի համար: 18 **Եւ ձեր գլխից մի մազ չի կորչի** (Դանիել 3): 19 Եւ ձեր համբերութեամբ կ'շահեք ձեր հոգիները:

Ղուկ. 21:20-24 - 20 Բայց երբոր կ'տեսնեք Երուսաղէմը զօրքերով շրջապատուած, այն ժամանակ գիտացեք, թէ նորա ակերումը մօտ է: 21 Այն ժամանակ նորանք, որ Հրէաստանուժն են, թող սարերը փախչեն. Եւ նորանք, որ նորա միջուժն են, թող հեռանան. Եւ նորանք, որ նորա գաւառներուժն են, թող չ'մտնեն նորա մէջ: 22 Որովհետեւ այն օրերը վրէժխնդրութեան օրեր են, որ ամեն գրուածները կատարուին: 23 Բայց այն օրերումը վա՛յ յղիներին եւ ծիծ տուողներին. որովհետեւ մեծ նեղութիւն (Կսկիծ, distress) կ'լինի երկրիս վերա, եւ բարկութիւն այդ ժողովրդի վրա: 24 Եւ սրի բերանով կ'ընկնեն, եւ բոլոր հեթանոսների մէջ գերի կ'տարուին. եւ Երուսաղէմը հեթանոսներից ոտնակոխ կ'լինի, մինչեւ որ հեթանոսների ժամանակները կատարուի:

Ղուկ. 21:25-38 - 25 Եւ նշաններ կ'լինին արեգակում եւ լուսնում եւ աստղերում, եւ երկրի վրա հեթանոսները խռովութեամբ կ'տագնապեն, ծովը կ'գոչէ եւ կ'ծփան ալիքները: 26

Որովհետեւ մարդկանց սրտերը կ'նուաղին վախից եւ այն բաների սպասելուցն, որ բոլոր աշխարհի վրա պիտի գան. որովհետեւ երկնքի զօրութիւնները կ'շարժուին: ²⁷ Եւ այն ժամանակ կ'տեսնեն մարդի Որդին ամպերի վրա եկած զօրութեամբ եւ մեծ փառքով: ²⁸ Եւ երբոր այս բաները կ'սկսեն լինիլ, վեր նայեցէք եւ բարձրացրէք ձեր գլուխները. որ ձեր փրկութիւնը մօտ է:

²⁹ Եւ նորանց մի առակ ասեց. Տեսէք թզենին եւ բոլոր ծառերը: ³⁰ Երբոր արդէն բողբոջած են, տեսնելով ինքներդ իմանում էք, թէ ամառը մօտ է: ³¹ Այնպէս էլ դուք երբոր այս բոլոր բաները եղած տեսնէք, գիտացէք, որ Աստուծո արքայութիւնը մօտ է: ³² Ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ **այս ազգը** չի անցնիլ, մինչեւ այս բոլորը լինի: ³³ Երկինքը եւ երկիրս կ'անցնեն, բայց իմ խօսքերը չեն անցնի: ³⁴ Զգոյշ կացէք անձներիդ, մի գուցէ ձեր սրտերը ծանրանան շատակերութիւնով եւ արբեցութիւնով եւ ապրուստի հոգսերով, եւ այն օրը յանկարծ հասնէ ձեզ վրա. ³⁵ Որովհետեւ որոգայթի պէս կ'հասնէ այն ամենքի վրա, որ բոլոր երկրի երեսի վերայ բնակած են: ³⁶ Ուրեմս արթուն կացէք, եւ ամեն ժամանակ աղօթք արէք, որ արժանի լինիք ազատուիլ այն բոլոր բաներիցը, որ պիտի լինին, եւ կանգնել մարդի Որդու առաջին:

³⁷ Եւ ցերեկները **տաճարումը սովորեցնում էր** եւ գիշերները դուրս էր գալիս եւ կենում այն սարումս, որ Զիթենեաց սար էր կոչվում: ³⁸ Եւ ժողովուրդն առաւօտանց կանուխ գնում էր տաճարը նորա մօտ նորանից լսելու: